

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀԿԳՄՍՆՄԱԱՊՁԲ-23/58

ք. Երևան

«07» 06 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սպիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արտակ Ավագյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) ընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.


2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

### 2.2 Գնորդը պարտավոր է՝



2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ «Օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

### **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4585750 (չորս միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) «՝ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներին հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:



Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3  
Կառավարական տուն 2,  
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն  
Հ/Հ 900011005130  
ՀՎՀՀ 02698732

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«Սպիկա» ՍՊԸ  
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Պուշկինի 43  
Հեռ.՝ (+374) 93-19-97-93  
Էլ. փոստ՝ [bravohayer@mail.ru](mailto:bravohayer@mail.ru)  
«Յունիբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 24109000246000  
ՀՎՀՀ 02519153

Գլխավոր քարտուղար՝

  
Վ. Տարսյան  
(ստորագրություն)  
Կ.Տ.  


Տնօրեն՝

  
Ա. Ավագյան  
(ստորագրություն)  


ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

Ապրանքի

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավոր գինը, ՀՀ դրամ	ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման	
								հասցեն	Ժամկետը
1	22111110/209	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Եզդիերեն այբբենարան» /հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան/, 1-ին դասարանի դասագիրքը</b>  <b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի հատկացված ժամաքանակին:</p> <p>Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների յուրացման հնարավորություններին: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա ստանալ տարրական գիտելիքներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ հետագայում ձեռք բերվելիք գիտելիքների համար: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման</p>	հատ	198	4250	841500	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը



			<p>համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանեցված լինի նյութին: Այբուբենի ուսուցումից հետո պետք է ներառվեն պարզ տեքստեր, որոնք կօգնեն ամրապնդել ստացած տարրական գիտելիքները:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16</p> <p>Տեքստի թուղթը՝ 70գր</p> <p>Տեքստի գույները՝ 4 + 4</p> <p>Էջերի քանակը՝ 100</p> <p>Կազմի թուղթը՝ 270 գ/մ</p> <p>Կազմի գունները՝ 4+0</p> <p>Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում</p> <p>Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
2	22111110/210	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Եզդի գրականություն 5» /հեղ.՝ Ա. Թամոյան, Հ.Թամոյան, Խ.Հաջոյան/, 5-րդ դասարանի դասագիրքը</b></p> <p><b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի</p>	հատ	84	4250	357000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուս. գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը:</p> <p>Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից-բարդ սկզբունքով: Դասագրքի լեզուն պետք է համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը:</p> <p>Պատկերագրությունը պետք է համապատասխանի տեքստին, սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարավորություններին:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16  Տեքստի թուղթը՝ 70 գր  Տեքստի գույները՝ 4 + 4  Էջերի քանակը՝ 100  Կազմի թուղթը՝ 270 գ/մ  Կազմի գույները՝ 4+0  Կազմելու ձևը՝ թերմոստանձով  Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
3	22111110/212	Դասագրքեր	<p>Գնման առարկա է հանդիսանում՝ «Եզդի գրականություն 8» /հեղ.՝ Ա. Թամոյան, Հ.Թամոյան, Խ.Հաջոյան/, 8-րդ դասարանի դասագիրքը Բովանդակային չափանիշներ</p>	հատ	37	4250	157250	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:

Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով: Դասագրքի լեզուն պետք է համապատասխանի սով. առանձնահատկություններին: Նյութը պետք է մշակված լինի տվյալ առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան: Դասագրքի ձևավորումը պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով: Նկարները պետք է լինեն համադրված տեքստին, ըստ անհրաժեշտության պետք է առկա լինեն համապատասխան մեկնաբանություններ:

**Տեխնիկական չափանիշները**

Չափսը՝	70 x 100 1/16
Տեքստի թուղթը՝	70գր
Տեքստի գույները՝	4 + 4
Էջերի քանակը՝	100
Կազմի թուղթը՝	270 գ/մ
Կազմի գունները՝	4+0
Կազմելու ձևը՝	թերմոսոսնձով կազմում
Երեսպատումը՝	լամինացված
Ելքային տեղեկություններ՝	Հայպետստանդարտի

			<p>կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
4	22111110/211	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Եզդի գրականություն 9» /հեղ.՝ Ա. Թամոյան, Հ.Թամոյան, Խ.Հաջոյան/, 9-րդ դասարանի դասագիրքը</b></p> <p><b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված</p> <p>և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշային պահանջներին և ծրագրին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին:</p> <p>Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշյով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշյով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է նյութերն ու առաջադրանքները հնարավորություն ընձեռեն կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից-բարդ սկզբունքով: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p>	հատ	37	4250	157250	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>Չափսը՝ 70 x 100 1/16  Տեքստի թուղթը՝ 70գր  Տեքստի գույները՝ 4 + 4  Էջերի քանակը՝ 100  Կազմի թուղթը՝ 270 գ/մ  Կազմի գունները՝ 4+0  Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում  Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
5	22111110/213	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Եզդիերեն 3-5» /հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան/, 3-5-րդ դասարանի դասագիրքը</b></p> <p><b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է համապատասխանի տվյալ տարիքային խմբի չափանիշներին, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:</p> <p>Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն</p>	հատ	315	4250	1338750	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Դասագիրքը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից՝ հարմար:</p> <p>Դասագիրքը պետք է լինի յուրացման համար մատչելի:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16  Տեքստի թուղթը՝ 70գր,  Տեքստի գույները՝ 4 + 4  Էջերի քանակը՝ 100  Կազմի թուղթը՝ 270 գ/մ  Կազմի գունները՝ 4+0  Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում  Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
6	22111110/214	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Եզդիերեն 6-8» /հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան/, 6-8-րդ դասարանի դասագիրքը</b></p> <p><b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին:</p>	հատ	132	4250	561000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Անհարաժեշտ է բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Քերականական սահմանումներից զատ պետք է ներառվեն տեքստեր, որոնք կօգնեն սովորողին կոնկրետ օրինակների վրա նյութն ըմբռնել: Դասագրքի լեզուն պետք է համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16</p> <p>Տեքստի թուղթը՝ 70գր,</p> <p>Տեքստի գույները՝ 4 + 4</p> <p>Էջերի քանակը՝ 100</p> <p>Կազմի թուղթը՝ 270 գ/մ</p> <p>Կազմի գույները՝ 4+0</p> <p>Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում</p> <p>Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
7	22111110/215	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Քրդերեն այբբենարան» /հեղ.՝ Ա.Մուսոյան/, 1-ին դասարանի դասագիրքը</b></p> <p><b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի</p>	հատ	26	8500	221000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը, նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների, արժեքային համակարգի, հմտությունների ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Այբբենարանը պետք է սովորողներին հնարավորություն տա ստանալ տարրական գիտելիքներ: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, Պատկերազարդումը պետք է գրավիչ լինի աշակերտի համար, հնարավորին չափ լինի ընկալելի:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16  Տեքստի թուղթը՝ 70գր  Տեքստի գույները՝ 4 + 4  Էջերի քանակը՝ 92  Կազմի թուղթը՝ 270 գ/մ  Կազմի գույները՝ 4+0  Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում  Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
8	22111110/216	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Քրդերեն 2» /հեղ.՝ Ա.Մուսոյան/, 2-րդ դասարանի դասագիրքը Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, կառուցվի սովորողների նախնական գիտելիքների և հմտությունների վրա:</p> <p>Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Այն պետք է իր հիմքում ունենա համամարդկային ու ազգային</p>	հատ	25	8500	212500	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

արժեքները զարգացնող ներուժ, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:

Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական հմացության մակարդակին: Պատկերազարդումները պետք է համապատասխանեն սովորողների պատրաստվածության աստիճանին:

**Տեխնիկական չափանիշները**

Չափսը՝	70 x 100 1/16
Տեքստի թուղթը՝	70գր, օֆսեթ
Տեքստի գույները՝	4 + 4
Էջերի քանակը՝	120
Կազմի թուղթը՝	270 գ/մ
Կազմի գույները՝	4+0
Կազմելու ձևը՝	թերմոսոսնձով կազմում
Երեսպատումը՝	լամինացված

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

9	22111110/217	Դասագրքեր	<p>Գնման առարկա է հանդիսանում՝ «Քրդերեն 3» /հեղ.՝ Ա.Մուսոյան/, 3-րդ դասարանի դասագիրքը <b>Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Առաջադրանքները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը, փոխհատուցի այն, ինչը դժվար է արտահայտել և ընկալել գրավոր խոսքով:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16  Տեքստի թուղթը՝ 70գր  Տեքստի գույները՝ 4 + 4  Էջերի քանակը՝ 120  Կազմի թուղթը՝ 270 գ/մ  Կազմի գունները՝ 4+0</p>	հատ	30	8500	255000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը
---	--------------	-----------	---	-----	----	------	--------	--------------------------	----------------------------------

			<p>Կազմելու ձևը՝ թերմոսունձով կազմում երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
10	22111110/218	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Քրդերեն 7» /հեղ.՝ Մամե Ալիխանե/, 7-րդ դասարանի դասագիրքը Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ, առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի ոչուրմբունելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Նյութը պետք է մշակված լինի տվյալ առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Պատկերազարդումները պետք է համապատասխանեն սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալ-</p>	հատ	22	8500	187000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>ման հնարավորություններին:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16</p> <p>Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ</p> <p>Տեքստի գույները՝ 4 + 4</p> <p>Էջերի քանակը՝ 120</p> <p>Կազմի թուղթը՝ ֆուտբորդ 270 գ/մ</p> <p>Կազմի գունները՝ 4+0</p> <p>Կազմելու ձևը՝ թերմոսոսնձով կազմում</p> <p>Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
11	22111110/219	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Քրդերեն 8» /հեղ.՝ Մամե Ալիսանե/, 8-րդ դասարանի դասագիրքը Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:</p> <p>Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավոր-</p>	հատ	17	8500	144500	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

			<p>րություներին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Պետք է առկա լինի բովանդակության ցանկ: Պետք է առկա լինեն առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի ոլորմբունելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի: Այն պետք է նպաստի գեղագիտական ճաշակի ձևավորմանը:</p> <p><b>Տեխնիկական չափանիշները</b></p> <p>Չափսը՝ 70 x 100 1/16  Տեքստի թուղթը՝ 70գր, օֆսեթ  Տեքստի գույները՝ 4 + 4  Էջերի քանակը՝ 120  Կազմի թուղթը՝ ֆուտրոդ 270 գ/մ  Կազմի գունները՝ 4+0  Կազմելու ձևը՝ թերմոսունձով կազմում  Երեսպատումը՝ լամինացված</p> <p>Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:</p> <p>Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունարժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:</p> <p>Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:</p>						
12	22111110/220	Դասագրքեր	<p><b>Գնման առարկա է հանդիսանում՝ «Քրդերեն 9» /հեղ.՝ Մամե Ալիխանե/, 9-րդ դասարանի դասագիրքը Բովանդակային չափանիշներ</b></p> <p>Դասագրքի բովանդակությունը պետք է լինի հիմնավորված և ժամանակակից, ներկայացվի բավարար խորությամբ ու ընդգրկունությամբ, համապատասխանի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին: Դասագիրքը պետք է նպաստի գիտելիքների ձեռքբերմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը, չհակասի ՀՀ սահմանադրությանը և օրենքներին: Բովանդակությունը պետք է համապատասխանի</p>	հատ	18	8500	153000	Համաձայն բաշխման ցուցակի	Մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը

առարկայական ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Բովանդակությունը պետք է նպաստի առարկայի չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Պետք է ապահովվի շարադրանքի մատչելիությունը: Բովանդակությունը պետք է սովորողներին հնարավորություն տա հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Պետք է առկա լինեն բովանդակության ցանկ, առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դասագրքի լեզուն պետք է լինի դյուրըմբռնելի, համապատասխանի սովորողների զարգացման առանձնահատկություններին, լեզվական իմացության մակարդակին: Նյութը պետք է մշակված լինի տվյալ առարկային բնորոշ լեզվական ոճին համապատասխան:

Դասագրքի ձևավորումը պետք է լինի յուրացման համար մատչելի, կիրառման տեսանկյունից հարմար և հաճելի:

Պատկերազարդումը պետք է համապատասխանի տեքստին, օգնի արտահայտելու տեքստում շարադրված միտքը:

**Տեխնիկական չափանիշները**

Չափսը՝	70 x 100 1/16
Տեքստի թուղթը՝	70գր, օֆսեթ
Տեքստի գույները՝	4 + 4
Էջերի քանակը՝	120
Կազմի թուղթը՝	Ֆուտրորդ 270 գ/մ
Կազմի գունները՝	4+0
Կազմելու ձևը՝	թերմոսոսնձով կազմում
Երեսպատումը՝	լամինացված

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում,

			առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը: Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:						
--	--	--	--	--	--	--	--	--	--

\* Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Գ Ե Ո Ր Դ

*Հ. Հակոբյան*

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ



Վ Ա Ճ Ա Ռ Ո Չ



*Ա. Ավագյան*

Ա. Ավագյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ\*

Չափաբանի համարը	Դասագրքի անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ընդամենը
1	«Եզդիերեն այբբենարան» 1-ին դաս. դասագիրք	6	17	98	57	20	198
2	«Եզդի գրականություն 5» 5-րդ դաս. դասագիրք	3	20	43	18	0	84
3	«Եզդի գրականություն 8» 8-րդ դաս. դասագիրք	3	0	11	23	0	37
4	«Եզդի գրականություն 9» 9-րդ դաս. դասագիրք	2	0	13	22	0	37
5	«Եզդիերեն 3-5» 3-5-րդ դասարանի դասագիրք	5	20	150	116	24	315
6	«Եզդիերեն 6-8» 6-8-րդ դասարանի դասագիրք	3	0	58	66	5	132
7	«Քրդերեն այբբենարան» 1-ին դաս. դասագիրք	0	0	26	0	0	26
8	«Քրդերեն 2» 2-րդ դասարանի դասագիրք	0	0	25	0	0	25
9	«Քրդերեն 3» 3-րդ դասարանի դասագիրք	0	0	30	0	0	30
10	«Քրդերեն 7» 7-րդ դասարանի դասագիրք	0	0	22	0	0	22
11	«Քրդերեն 8» 8-րդ դասարանի դասագիրք	0	0	17	0	0	17
12	«Քրդերեն 9» 9-րդ դասարանի դասագիրք	0	0	18	0	0	18
<b>Ը Լ Դ Ա Մ Ե Լ Ը</b>		<b>22</b>	<b>57</b>	<b>511</b>	<b>302</b>	<b>49</b>	<b>941</b>

\*Օանդություն. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին հատկացվող դասագրքերի քանակի մեջ ներառված է ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող հաստատություններին հասանելիք դասագրքերի քանակը:

Կ.Տ

Գ Լ Ո Ր Դ  
 Հ. Հակոբյան  
 (ստորագրություն)  
 02698732

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ  
 Վ. Ավագյան  
 (ստորագրություն)  
 «ՍՊԻԿԱ»  
 02519153  
 Կ.Տ



6	22111110/214	<b>Դասագրքեր</b> «Եզդիերեն 6-8» /հեղ.՝ Ա.Թամոյան, Հ.Թամոյան/ 6-8-րդ դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	561000	561000	561000	561000	561000	561000	561000
7	22111110/215	<b>Դասագրքեր</b> «Քրդերեն այբբենարան» /հեղ.՝ Ա.Մուսոյան/, 1-ին դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	221000	221000	221000	221000	221000	221000	221000
8	22111110/216	<b>Դասագրքեր</b> «Քրդերեն 2» /հեղ.՝ Ա.Մուսոյան/, 2-րդ դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	212500	212500	212500	212500	212500	212500	212500
9	22111110/217	<b>Դասագրքեր</b> «Քրդերեն 3» /հեղ.՝ Ա.Մուսոյան/, 3-րդ դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	255000	255000	255000	255000	255000	255000	255000
10	22111110/218	<b>Դասագրքեր</b> «Քրդերեն 7» /հեղ.՝ Մամե Ալիխանե/, 7-րդ դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	187000	187000	187000	187000	187000	187000	187000
11	22111110/219	<b>Դասագրքեր</b> «Քրդերեն 8» /հեղ.՝ Մամե Ալիխանե/, 8-րդ դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	144500	144500	144500	144500	144500	144500	144500
12	22111110/220	<b>Դասագրքեր</b> «Քրդերեն 9» /հեղ.՝ Մամե Ալիխանե/, 9-րդ դասարանի դասագիրք	0	0	0	0	0	0	0	153000	153000	153000	153000	153000	153000	153000

\* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Կ.Տ  
  
 Հ. Հակոբյան  
 (ստորագրություն)  

 02698732

ԿԱՃԱՌՂ  
  
 Ա. Ավագյան  
 (ստորագրություն)  

 02519153